

Հետքացթողումային մաքսային հսկողությունը որպես հսկողության տեսակ ՀՀ-ում

Հակոբյան Հ. Ռ.

ՀՊՏՀ, Ֆինանսական ֆակուլտետի մագիստրոս (Երևան, Հայաստան)
hakobianhov@gmail.com

Վճռորոշ քառեր՝ մաքսային հսկողություն, բացթողում, հետքացթողումային մաքսային հսկողություն, մաքսային սահման, հայտարարագրում

Таможенный контроль после выпуска товаров, как вид контроля в Армении

Акобян О. Р.

Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
hakobianhov@gmail.com

Аннотация: Важная роль в системе органов государственного управления ВЭД принадлежит таможенной службе как наиболее динамично развивающийся, в некоторых случаях доведенной до совершенства и одновременно обслуживающей участников ВЭД. В частности, в условиях загруженности таможенных границ возникает необходимость осуществлять таможенный контроль после выпуска товаров и транспортных средств. В целом таможенный контроль после выпуска товаров мощный инструмент, правильное и оптимальное применение которого исходит из общих экономических интересов. В статье я рассмотрел необходимость, специфику и применение таможенного контроля после выпуска товаров, а так же результаты, осуществленного таможенными органами. Я также рассматривал наиболее распространенные нарушения при перемещении товаров и транспортных средств через таможенную границу и возможные способы их предотвращения.

Ключевые слова: Таможенный контроль, выпуск, таможенный контроль после выпуска, таможенная граница, декларирование

Post-clearance customs control as a type of control in the Republic of Armenia

Hakobyan H. R

Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
hovhakobian@gmail.com

Abstract: An important role in the system of state administration of FEA belongs to the customs service as the most dynamically developing, in some cases brought to perfection and at the same time serving FEA participants. In particular, when the customs borders are busy, it becomes necessary to carry out post-clearance control of goods and vehicles. In General, post-clearance customs control is a powerful tool, the correct and optimal use of which is based on common economic interests: In the article, I spoke about the need, features, application and results of post-clearance control carried out by customs authorities. I also touched on the most common violations when goods and vehicles across the customs border, and analyzed possible ways to prevent them.

Keywords: Customs control, release, Customs control after release, customs border, declaration

Հաշվի առնելով ՀՀ արտաքին առևտրի զարգացման ներկայիս մակարդակը, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Համաշխարհային Մաքսային Կազմակերպությանը (ՀՄԿ), Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ) և ԵԱՏՄ լիիրավ անդամ է դրանով իսկ ունի մի շարք պարտավորություններ, Հայաստանի Հանրապետությունում նույնպես, շարունակաբար իրականացվում է մաքսային արարողակարգերի պարզեցում: Ներդրվել են ապրանքների ընտրողական զննման, ինչպես նաև ինքնահայտարարագրման համակարգեր,

աշխատանքներ են տարվում մաքսային ձևակերպումների ժամանակ լրացվող ավելորդ փաստաթղթերի կրճատման, ոչ սակագնային կարգավորման միջոցների տեսակարար կշռի իջեցման ուղղություններով:

Նման պայմաններում կատարելագործման են ենթարկվել նաև մաքսային հսկողության մեխանիզմները, 2003թ.-ից սկսած ներդրվել է Հետքացթողումային մաքսային հսկողություն: Հետքացթողումային հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում սկսել է իրականացվել “ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մա-

սին” 2003թ. մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն: Նշված փոփոխությամբ, ՀՀ մաքսային օրենսգրքի 1501 հոդվածով սահմանվել է հետբացթողումային հսկողության հասկացությունը: Նշված օրենքի դրույթների կատարման ապահովման նպատակով ՀՀ ԿԱ ՄՊԿ նախագահի հրամանով 20.01.2004թ. մաքսային պետական կոմիտեի կենտրոնական ապարատի կազմում ստեղծվել է հետբացթողումային հսկողության բաժին [1]:

Ներկայումս ՀՀ-ում Հետբացթողումային հսկողություն իրականացնում է ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչությանը: Վարչությունը կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018թ. հուլիսի 11-ի թիվ 702-Լ որոշման համաձայն:

Հետբացթողումային հսկողության վարչության հիմնական խնդիրներն են.

1. Մաքսային ստուգման իրականացում, այդ թվում մաքսային հսկողության այլ ձևերի և մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոցների կիրառմամբ:

2. Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտման ռիսկերի բացահայտման նպատակով ապրանքների բացթողումից հետո վերլուծությունների իրականացում:


3. Հետբացթողումային հսկողության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, այդ թվում՝ իրավական ակտերով փոփոխությունների իրականացման հետ կապված [2]:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային արարողակարգերը իրականացվում է համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի և մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի:

Հաշվի չառնելով մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային հսկողության ժամկետները, մաքսային մարմինների ինչպես նաև հայտարարատուի կամ ապրանքներ տեղափոխող անձանց խնդրանքով, ապրանքների բացթողումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ստուգման, այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև մաքսային վճարների հաշվարկման և վճարման ճշտության

ստուգման նպատակով մաքսային մարմինները իրավունք ունեն ստուգել հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման փաստով պայմանավորված ապրանքներ տեղափոխող անձի կողմից մաքսային օրենսդրությանը համապատասխան ստանձնած պարտավորությունների կատարման ճշտությունը: Ապրանքների բացթողումից հետո հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաև ապրանքներ տեղափոխող անձի ստանձնած պարտավորությունների կատարումը ճշտելու նպատակով մաքսային մարմիններն իրավունք ունեն ստուգել բացթողնված ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման և մաքսային սահմանով բացթողումից հետո դրանց հետագա շրջանառության վերաբերյալ տեղեկատվության աղբյուր հանդիսացող փաստաթղթերը: Մաքսային մարմինների պահանջի դեպքում ապրանքներ տեղափոխող անձը կամ հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմիններին ներկայացնել նշված փաստաթղթերը, որոնք նշված պահանջի ներկայացման դեպքում հանդիսանում են մաքսային հսկողությունն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հետբացթողումային հսկողությունն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա: Հրամանն իր մեջ ներառում է հսկողությունը իրականացնող մաքսային մարմնի անունը, հայտարարատուի անվանումը, արանքները տեղափոխող անձի անունը, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կամ անձանց պաշտոնը, անուն ազգանունը, հետբացթողումային հրսկողության նպատակը, հարցերը, ժամկետը և ընդգրկող ժամանակաշրջանը: Հետբացթողումային հսկողության հրամանը 2 օրինակով տրամադրվում է հայտարարատուին կամ ապրանքներ տեղափոխող անձին: Վերջիններս պարտավոր են ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված են մաքսային հսկողության անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձին: Հետբացթողումային հսկողության հրամանով



Գծապատկեր. 2014-2019 թվականների մաքսային մարմինների կողմից իրականացված հետբացթողումային հսկողության քանակները և արդյունքները

նշված ժամկետը սահմանվում է ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր [3]:

Նշենք նաև, որ հայտարարատուի կամ ապրանքներ տեղափոխող անձի մոտ սահմանված ժամկետներում միևնույն գործարքի հսկողությունն իրականացվում է մեկ անգամ: Առանձին դեպքերում, եթե առկա են մաքսային հսկողության իրականացնելու իրավական հիմքերը, ապա մաքսային մարմինները կարող են իրականացնել կրկնակի հետառաքումային հսկողություն, ինչը կարող է իրականացվել միայն ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ:

Խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմվում է համապատասխան տեղեկանք, որտեղ նշվում է, որ որևէ խախտում չի հայտնաբերվել: Տեղեկանքում նշվում է ամսաթիվն ու տեղը, մաքսային մարմնի և ապրանքներ տեղափոխող անձի կամ հայտարարատուի անվանումները, ստուգման մասնակիցների կազմը, հետբացթողումային հսկողության նպատակը, ժամկետը, արդյունքները: Մաքսային մարմինները իրավունք ունեն գննելու նաև այն ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն, որոնց կապակցությամբ անց է կացվում հետբացթողումային հսկողությունը, եթե ապրանքներ տեղափոխող անձը կամ հայտարարատուն ունի այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները գնման ներկայացնելու հնարավորություն:

Մաքսային հսկողության իրականացման ժամանակ ապրանքներ տեղափոխող անձինք իրավունք ունեն քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվելու փաստաբանների, թարգմանիչների, մասնագետների կամ այլ ծառայություններից, ծանոթանալու մաքսային հսկողության նյութերին, բողոքարկելու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց ոչ օրինական գործողությունները [4]:

Կարող ենք ասել, որ հետբացթողումային հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ստուգման, այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև մաքսային վճարների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման նպատակով՝ հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու միջոցով: Նշված նպատակներին հասնելու համար նախ իրականացվում են վերլուծական աշխատանքներ բացահայտելու համար այն բաձր ռիսկային ոլորտները, որտեղ հնարավոր են մաքսային կանոնների խախտումներ և որպես հետևանք մաքսային վճարների թերգանձումներ:

Խարդախությունների ամենատարածված ձևերն են՝

✓ Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշումը: Շատ երկրներում պաշտոնական և ոչ պաշտոնական ձևով կիրառվում են, այսպես կոչվող, նվազագույն հսկիչ գներ: Ավելի զարգացած երկրներում գոյություն ունեն իրավական մաքսային արժեքը որոշելու կամ ստուգելու եղանակներ: Հայաստանի պարագայում մաքսային արժեքի իրական չափի որոշումը պահանջում է երկար ժամանակ և միջոցներ, առավել ևս, որ արտաքին առևտրի մասնակիցներից շատերը իրենց գործարքները իրականացնում են կանխիկ ձևով, և փաստորեն շրջանցում են բանկային համակարգը, և այդպիսի գործարքներից շատերը որևէ տեղ իրենց արատցումը չեն գտնում:

✓ Նախատեսված են որոշակի արտոնություններ ԱՊՀ երկրներից ծագած ապրանքների ներմուծման դեպքում, կապված «Ազատ առևտրի մասին» միջպետական համաձայնագրից: Խնդիրներն առաջանում են, երբ ապրանքի ծագման երկրի ճիշտ հայտարարագրումից խուսափելու և համապատասխան մաքսային արտոնություններից օգտվելու նպատակով ապրանքի փաթեթավորման կամ պիտակների վրա որպես ծագման երկիր փորձում են նշել, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, մինչդեռ իրականում ապրանքը ծագում է բոլորովին այլ երկրից:

✓ Որպես հաջորդ բարձր ռիսկային ոլորտ անհրաժեշտ է առանձնացնել ապրանքների ճիշտ դասակարգումը: Կան մի շարք ապրանքատեսակներ, որոնք դասակարգելիս դրանց կարելի է տալ երկու ծածկագիր: Հիմնականում դա կախված է տվյալ ապրանքի նյութից կամ նպատակային նշանակությունից, իսկ ելնելով որոշ ապրանքների բնույթից, իրականում այն որոշելը բավականին բարդ է: Նման բարձր ռիսկային ապրանքների տեսականին և ընհանուր ապրանքաշրջանառության մեջ դրանց տեսակարար կշիռը, կապված մաքսատուրքերի և այլ մաքսային վճարների

դրույքաչափերից, անընդհատ փոփոխվում են:

✓ Ֆիզիկական քանակներ, երբ հայտարարագրված ապրանքների ֆիզիկական քանակներն ավելի քիչ են փաստացի տեղափոխված ապրանքների քանակներից:

Նշված պարամետրերով խախտումների բացահայտման համար վերլուծություններն իրականացվում են մի շարք ուղղություններով, մասնավորապես.

Ըստ ապրանքների ծագման և առաքման երկրների,

Ըստ որոշակի ապրանքատեսակների,

Ըստ ապրանքների քանակների

Ըստ ներմուծող / արտահանող կազմակերպությունների,

Ըստ ռիսկի չափանիշի

Ըստ մաքսային հսկողության

Ըստ ձևակերպող մաքսային մարմինների:

Իրականացվող վերլուծությունների արդյունքում, ելնելով վերը շարադրված պարամետրերի համադրումից, առանձնացվում են այնպիսի գործարքներ, որոնցում հնարավոր է մաքսային կանոնների խախտումներ: Առանձնացված գործարքների ավելի մանրամասն ուսումնասիրության արդյունքում բավարար հիմքեր ունենալու ժամանակ սկսվում է հետբացթողումային հսկողություն, կամ նախապատրաստվում են համապատասխան հարցումներ՝ ապրանքների արտահանման երկրների մաքսային մարմիններին, որոնցից իրական հաշիվ ապրանքագրերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա էլ սկսվում է հետբացթողումային հսկողությունը:

Անրադառնանք հետբացթողումային հսկողության ցուցանիշներին: Միայն 2019 թվականի ընթացքում հետբացթողումային հսկողության վարչության կողմից կատարվել է թվով 76 ստուգում, (ինչը երկու անգամ ավելի շատ է քան 2014 թվականին) որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկված գումարը կազմել է 304,5 մլն դրամ մաքսային վճարներ և տույժեր, որից ՀՀ պետական բյուջե է վճարվել 224,5 մլն դրամ:

2019 թվականի ընթացքում Պեկ մաքսանենգության դեմ պայքարի վարչության և պեկ այլ ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների այդ թվում՝ օպե-

րատիվ-հետախուզական միջոցառումների և մաքսային հսկողության հետ կապված գործառնությունների արդյունքում արձանագրվել է մաքսային իրավախախտումների 202 դեպք, որը 2018 թվականի համեմատությամբ 22 %-ով ավել է:

Հայտնաբերված 202 դեպքից 146-ը հանդիսացել են մաքսանենգության դեպքեր, որոնցով հարուցվել են քրեական գործեր, իսկ 56 դեպքով սկսվել է վարչական վարույթ [5]:

Նշենք նաև, որ մաքսային արարողակարգերի և ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման նպատակով նախատեսվում է ներդնել մաքսային հայտարարագրման ժամանակ ընտրվող մաքսային զննման «Կապույտ ուղի» ընթացակարգը, որը կծառայի որպես *հետքացթողումային ստուգման փուլ*: Որի նպատակը կլինի կրճատելու ապրանքների նախաքացթողումային հսկողության ժամանակահատվածը և ընդլայնելու հետքացթողումային հսկողության շրջանակները: Մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման առումով շատ կարևոր է մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատում, ուստի «Կապույտ ուղի» ներդրումը դրական նշանակություն կարող է ունենալ: Նեերկայումս մաքսային հայտարարագրը մաքսային մարմինների կողմից ընդունվելուց և գրանցվելուց հետո հաջորդում է ընտրանքի փուլը, որի ժամանակ ընտրվում է մաքսային հսկողության 3 հետևյալ ուղիներից մեկը՝

- «Կանաչ ուղի»։ Հայտարարագրված ապրանքները զննման ենթական չեն,
- «Դեղին ուղի»։ Հայտարարագրված ապրանքները ենթակա են մասնակի զննման,
- «Կարմիր ուղի»։ Հայտարարագրված ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են մանրակրկիտ զննման:

Մաքսային համակարգի զարգացման համատեքստում կարևորվում է նաև հետքացթողումային հսկողության համակարգի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս կարող է նպաստել ներմուծման պահին մաքսային սահմանին իրականացվող հսկողությունը նվազագույնի հասցնելուն: Այս

իմաստով, հատկանշական է այն, որ որոշ հսկողական գործառնություններ մաքսային սահմանից աստիճանաբար դուրս բերելը և դրանք հետքացթողումային հսկողության շրջանակներում տեղայնացնելը միանգամայն համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին և կարող է հաջողությամբ իրականացվել նաև մեր երկրում: Ունենալով հետքացթողումային հսկողության նման հզոր մաքսային գործիք անհրաժեշտություն է առաջանում այն կիրառել ըստ նպատակի, որի արդյունքում անձինք ովքեր հակված են մաքսային սահմանով տեղափոխել անօրինական և անհայտ ծագման ապրանքներ ու տրանսպորտային միջոցներ վստահ լինեն որ չեն խուսափելու հետքացթողումային մաքսային հսկողությունից: Իսկ օրինապահ տնտեսվարողներին հնարավորություն կտա ավելի արգ փոխադրում իրականացնել մաքսային սահմանով:

Ամփոփելով այս ամենը կարող ենք ասել, որ հետքացթողումային մաքսային հսկողությունը տնտեսական անվտանգության այլուներից մեկն է և, որ վերջինիս ճիշտ և արդյունավետ կառավարումը բխում է ազգային անվտանգության շահերից:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2003թ մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն:
2. «ՀՀ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» 2019 թ. Փետրվարի 13-ի, ՊԵԿ նախագահի համար 91 հրաման:
3. «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2003թ մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն:
4. **Ճուղության Ա.** «Մաքսային գործի հիմունքներ» ուսումնական ձեռնարկ էջ 125, 126 Երևան 2007 թ.
5. <https://www.petekamutner.am/> (Տարեկան հաշվետվություններ 2014-2019)

Տժանա/Հանձնվել է՝ 23.06.2020
 Рецензирована/Գրախոսվել է՝ 25.06.2020
 Принята/Ընդունվել է՝ 29.06.2020